

17.12.12թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում են <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

01.06.2012թ-ի էական տեղեկատվությամբ բացահայտված, <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին փոխկապակցված ընկերությունների (<Շեն-Գրուպ> ՓԲԸ և <Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս> ՍՊԸ) <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին միացնելու պետական գրանցումը կատարվել է 12.12.2012թ-ին: Վերակազմակերպման (միացման) արդյունքում դադարեցին գործունեություն իրականացնել <Շեն-Գրուպ> ՓԲԸ-ն և <Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս> ՍՊԸ-ն, որոնց իրավահաջորդը հանդիսացավ <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն): Վերջինիս կանոնադրական կապիտալը ավելացավ 798,330,000.00 դրամով և կազմեց 2,298,330,000.00 դրամ: Արդյունքում Ընկերության բաժնետոմսերի քանակը համապատասխանաբար ավելացավ 79,833.00 հատով և կազմեց 229,8330.00 հատ, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը պահպանվեց նույնը՝ յուրաքանչյուրի համար 10,000.00 դրամ:

Վերակազմակերպման արդյունքում, բաժնետոմսերի փոխարկման կարգին համապատասխան, Ընկերության բաժնետերերի ձևավորված ներկայիս կազմը հետևյալն է՝

Բաժնետեր	Հասարակ անվանական բաժնետոմսերի քանակ հատ	Բաժնեմաս %
Ընկերության նախկին բաժնետերեր	159,498.00	69.397%
Ընկերություն*	70,335.00	30.603%

* Ենթակա է տեղաբաշխման 180 օրվա ընթացքում:

31.03.12թ-ի դրությամբ կազմված միացման հաշվեկշռի մնացորդները տեղափոխվում են <Շեն-Գրուպ> ՓԲԸ-ից <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին՝ ընդամենը ակտիվներ 1,935,299.00 հազ. դրամ և պարտավորություններ 932,880.00 հազ. դրամ ու <Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս> ՍՊԸ-ից <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ին՝ ընդամենը

ակտիվներ 2,745,777.00 հազ. դրամ և պարտավորություններ 1,273,731.00 հազ. դրամ: Միացումից հետո <Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ի ընդհանուր ակտիվները դառնում են 12,221,362.00 հազ. դրամից 16,902,438.00 հազ. դրամ, իսկ պարտավորությունները 7,572,159.00 հազ. դրամից 9,778,770.00 հազ. դրամ:

Սույն էական տեղեկատվությունից բացի Ընկերության պաշտոնական կայքում տեղադրվում են նաև՝

1. Ընկերության կանոնադրության փոփոխությունը,
2. Պետական ռեգիստրի <իրավաբանական անձանց միացման մասին> տեղեկանքը:
3. Ընկերության Պետական ռեգիստրի գրանցման վկայականի ներդիրը:

No 17/12-1
17/12 2012 թ.




ՇԵՆ-ԿՈՆՑԵՐՆ ՓԲԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Զավադյանին

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում 'Շեն-Կոնցերն' ՓԲԸ-ին վերաբերող 17.12.12թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է աղբյուր 2 թերթ):

Տնօրեն



Պապ Բադալյան